


ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ



Ձեռնարկ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՒԹԵՔԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ մանկավարժների համար

Երևան - 2024

ՀՏԴ
ԳՄԴ
Ա

Ջգայական ինտեգրման մասին:

Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար / Մ. Ռ. Հարությունյան, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.:... 2024. - 48 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 09.02.2024 թվականի 196-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ.գ.թ., դոցենտ Ա. Հ. Սվաջյան

Գրախոսներ՝

Թադևոսյան Հ. Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Ս. Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հեղինակ՝

Հարությունյան Մ. Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Համակարգչային ձևավորում՝ Խուդավերդյան Դ. Գ., Դավթյան Հ. Լ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Սույն ձեռնարկի նպատակն է աջակցել հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներին և զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաների ծնողներին՝ ճանաչել երեխայի խնդիրը և օգնել հաղթահարել այն՝ առավելագույնս ներառելով նրան առօրյա գործունեության մեջ և կրթական գործընթացում:

ISBN

Տպաքանակը՝ 150 օրինակ

ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
Ի՞ՆՉ Է ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ	5
ԻՆՉՈՒ՞ Է ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԿԱՐԵՎՈՐ.....	9
ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՎԵՐԼՈՒԾԻՉՆԵՐ ԵՎ ԴԻՍՖՈՒՆԿՑԻԱՅԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	11
ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԽԱՆԳԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ.....	16
ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ	19
ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԽՈՐՀՈՒՐԴ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ	22
ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ	33
ԶԳԱՅԱԿԱՆ ՍՆՆԴԱԿԱՐԳ/ԴԻԵՏԱ	39
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	46

ՆԱԽԱԲԱՆ

Զգայական ինտեգրումն ինքնին ցույց է տալիս՝ ինչպես է մարդ զգում, մեկնաբանում և արձագանքում (կամ անտեսում) իր զգայարաններից ստացվող տարբեր բնույթի տեղեկատվությանը: Զգայական ինտեգրումը կարևոր է անձի գործունեության բոլոր ոլորտներում. առօրյա գործողություններում, ինքնախնամքում, սովորելիս, աշխատելիս և ժամանցային միջոցառումներին ներգրավվելիս: Համադրելով բոլոր զգայարաններից ստացված տեղեկատվությունը՝ անձը կարողանում է մասնակցել և ներգրավված լինել առօրյա տարբեր գործունեության մեջ, «իմաստավորել» շրջապատող աշխարհը և արդյունավետ փոխազդել արտաքին աշխարհի հետ:

Զարգացման տարբեր խնդիրներ և/կամ ֆունկցիայի տարբեր աստիճանի խանգարում ունեցող երեխաների հետ աշխատող ուսուցիչները, մասնագետները, ինչպես նաև նրանց ծնողները պետք է հնարավորություն ունենան պատկերացնել զգայական ինտեգրման խանգարումների արդյունքում առաջ եկող դժվարությունները և կարողանան վերջիններիս հակազդել մասնագիտական մոտեցումների կիրառմամբ:

Այս ձեռնարկն ուղղված է հենց այդ խնդրի հաղթահարմանը և նպատակ ունի օգնել ուսուցիչներին, մասնագետներին և զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաների ծնողներին՝ ճանաչել երեխայի խնդիրը և օգնել երեխային հաղթահարել այն՝ առավելագույնս ներառելով նրան առօրյա գործունեության մեջ և կրթական գործընթացում:

ԻՆՉ Է ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ

Առաջին անգամ «զգայական ինտեգրացիա» հասկացությունը ներկայացրել է ամերիկացի էրգոթերապևտ, երեխաների զարգացման մասնագետ Ջին Այրեսը: Նա մշակել և ներկայացրել է զգայական ինտեգրման տեսություն՝ հիմնված ուղեղի գործունեության համակարգային մոտեցման վրա, որն օգնում է հասկանալ, թե ինչպե՞ս է զգայական տեղեկատվության մշակման գործընթացը կապված երեխայի վարքի և սովորելու հետ (Ayres & Robbins, 2005):

Զգայական ինտեգրման մեթոդի հիմնադիր Ջին Այրեսը անդաստակային (վեստիբուլյար) ապարատը համարում էր նյարդային համակարգի միջուկը: Վերջինիս միջոցով բոլոր զգայությունները «անցնում են» մնացած բոլոր զգայական ուղիներով: Ուստի հնարավոր և անհրաժեշտ է աշխատել զգայական ընկալման ցանկացած խախտման ուղղությամբ վեստիբուլյար ապարատի միջոցով: Հենց այստեղ պետք է որոնել այն հարցերի և խնդիրների լուծումը, որոնք կապված են երեխայի մարմնի զգացողության՝ տարածության մեջ ճարպկության, հավասարակշռության, համակարգվածության, ուշադրության, խոսքի, շարժվող առարկային հետևելու կարողության և այլնի հետ: Այս ամենը հիմք է հանդիսանում երեխայի արդյունավետ սոցիալականացման և սովորելու համար (գրել, հաշվել, կարդալ և այլն): Հենաշարժողական համակարգը օգնում է երեխային նստել, քայլել, ցատկել, գլուխը ուղիղ պահել և այլն (Ayres & Robbins, 2005):

Զգայական ինտեգրումը զգայական ազդանշանների փոխանցման գործընթացն է: Վերջինիս շնորհիվ մարդու ուղեղը վերահսկում է մարմնի ռեակցիաները, անձի հույզերը և վարքագիծը: Այլ կերպ ասած՝ զգայական ինտեգրումը գործընթաց է, որի ժամանակ մարդու նյարդային համակարգը զգայարանների միջոցով ստանում է տեղեկատվություն, այնուհետև հավաքագրում, կարգավորում, պահպանում և մշակում այնպես, որ հնարավոր լինի կիրառել

նպատակային գործունեության մեջ առօրյայում՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելիս (Նկար 1):


Զգայական ինտեգրման դիսֆունկցիայի դեպքում տարբեր աղբյուրներից ստացված ազդանշանները, հասնելով ուղեղին, չեն վերածվում համարժեք պատասխանների. արդյունքում երեխան համարժեք վարքագիծ չի դրսևորում. ոմանց մոտ ի հայտ է գալիս գերգրգռվածություն, իսկ մյուսներն, ընդհակառակը, խուսափում են ցանկացած զգայական գրգռից (Кислинг, 2014):

Նկար 1. Զգայական ինտեգրման կազմակերպման գործընթաց

Տեղեկատվության ընկալում զգայարանների միջոցով



Ստացված տեղեկատվության կազմակերպում և վերլուծություն



Կիրառում առօրյա կյանքում արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելիս



Զգայական ազդակների մշակման գործընթացի խանգարման հետևանքով խնդիրներ են առաջանում երեխայի շարժողական, ճանաչողական, հուզական ոլորտներում և վարքագծում: Հետևաբար, զգայական ինտեգրման խանգարումներ կամ, այլ կերպ ասած՝ ստացված տեղեկատվության մշակման անբավարարություն ունեցող երեխաները դժվարությամբ են ներգրավվում այնպիսի առօրյա գործողություններում, ինչպիսիք են հագնվելը, խաղալը, ճաշելը, սոցիալական շփումները և այլն (Guardado, Sergeant, 2022, Պապիկյան, 2021):

Այսպիսով՝ զգայական ինտեգրումը.

- իրենից ներկայացնում է ենթագիտակցական գործընթաց, որը տեղի է ունենում մարդու ուղեղում,
- կազմակերպում է այն տեղեկատվությունը, որը ստանում է զգայարանների միջոցով,
- իմաստավորում է զգացողությունները՝ զտելով ստացված տեղեկատվությունը և ընտրելով այն, ինչի վրա անհրաժեշտ է կենտրոնանալ,
- թույլ է տալիս իմաստալից գործել և ըստ արժանվույն արձագանքել իրավիճակին (տալ հարմարվողական արձագանք),
- հիմք է ստեղծում տեսական ուսուցման և սոցիալական վարքագծի համար (Джин, 2009):

Զգայական ինտեգրման հետ կապված գործառույթները բնականոն զարգացում ունեն: Բոլոր երեխաների զարգացումը տեղի է ունենում որոշակի հաջորդականությամբ՝ պարզից դեպի բարդը: Զգայական ինտեգրման զարգացման մեջ բնականոն հաջորդականությունից զգալի շեղումները հետագայում հանգեցնում են խնդիրների կյանքի տարբեր ոլորտներում՝ ինչպես սոցիալական, այնպես էլ կենցաղային (Кислинг, 2014):

ԻՆՉՈՒ՝ Է ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԿԱՐԵՎՈՐ

Նորածին երեխան կարող է տեսնել, լսել և զգալ իր մարմինը, բայց, միևնույն ժամանակ, նա չի կարողանում լավ կազմակերպել և համադրել զգայարաններից ստացված տեղեկատվությունը: Այդ իսկ պատճառով երեխայի կողմից ստացված տեղեկատվությունը գրեթե նշանակություն չունի: Նորածինները չեն կարողանում պատկերացում կազմել հեռավորության մասին կամ համադրել առարկաները, քանի որ երեխայի վրա շարունակաբար իրենց ազդեցությունն են ունենում տարբեր զգայական ազդակներ. նա աստիճանաբար սովորում է ստացված տեղեկատվությունը կազմակերպել և իմաստավորել իր ուղեղում: Երեխան ավելի լավ է կարողանում կենտրոնանալ մեկ զգայարանի վրա, և, որպես արդյունք, բարելավվում է նրա գործունեությունը: Նրա կտրուկ և անկազմակերպ շարժումները փոխվում են՝ դառնալով ավելի սահուն և կազմակերպված: Երեխան կամաց-կամաց սովորում է միաժամանակ ստանալ և կառավարել բազմաթիվ զգայական ազդակներ: Ընկալելով և կազմակերպելով տարբեր զգայական ազդակները՝ երեխան կարողանում է փոխել իր արձագանքը, ռեակցիան: Որպես արդյունք՝ նա ձեռք է բերում իր զգացմունքներն ու զգացողությունները վերահսկելու ունակություն և սկսում ապրել արտաքին աշխարհին ավելի համահունչ:

Արտաքին ազդակների հստակ ընկալումը և համապատասխան արձագանքի ձևավորումը դրսևորվում է որոշակի վարքագծի, հմտությունների, ուշադրության և ինքնակառավարման ադեկվատ արտահայտմամբ (վերահսկելով նրանց ֆիզիկական ակտիվությունը, հուզական և ճանաչողական արձագանքները): Երեխաները կարողանում են նստել դասարանում և ուշադրություն դարձնել կարևոր տեղեկատվությանը, հետևաբար ունեն իրենց կարողությունները դրսևորելու և հաջողությունների հասնելու մեծ հնարավորություններ: Ավելին, երեխան կարողանում է հասկանալ իր մարմնի շարժումները,


իր և իր շրջապատի հետ կապը: Սա թույլ է տալիս հաջողությամբ մարմնի տարաբնույթ շարժումներ կատարել տարբեր գործողություններում, ինչն էլ իր հերթին նպաստում է երեխայի սոցիալական զարգացմանը:

ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՎԵՐԼՈՒԾԻՉՆԵՐ ԵՎ ԴԻՍՖՈՒՆԿՑԻԱՅԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ

Բոլոր զգայարաններից ստացված տեղեկատվության արդյունավետ մշակման համար անհրաժեշտ է զգայական համակարգերի ներդաշնակ աշխատանք: Մարդու զգայական համակարգը բաղկացած է 7 զգայարաններից, որոնք ստանում են տեղեկատվությունը արտաքին աշխարհից և ուղարկում դեպի ուղեղ՝ համապատասխան մշակման:

Աղյուսակ 1-ում ներկայացվում է մարդու զգայարանների նկարագրությունը:

Աղյուսակ 1.



Տեսողական վերլուծիչ

Միջավայրից ստացվող տեղեկատվության մեծ մասը (70–90 %) մարդը ստանում է տեսողության միջոցով: Տեսողության վերլուծիչի շնորհիվ մարդը կարողանում է կողմնորոշվել շրջապատող միջավայրում, որոշել իր դիրքը տարբեր առարկաների նկատմամբ և խուսափել տարբեր վտանգներից: Աչքերի միջոցով տեսողական համակարգը կարողանում է տեղեկություն ստանալ լույսի և մթի, գույնի և շարժման, տարածության մասին: Մարդու ուսումնառությունը, աշխատանքային գործունեությունը նույնպես կապված են տեսողության հետ:

Տեսողական դիսֆունկցիայի ցուցիչներ. Երեխան չի նայում աչքերի մեջ և փախցնում է հայացքը, սիրում է խաղալ կիսախավար սենյակում, լաց է լինում և աչքերը կկոցում վառ լույսից, կամ էլ չի տարբերում գույները, առարկաների ձևերը, գծում է շատ փոքր կամ չափազանց մեծ գծեր, գրում է հայելանման, չի կարողանում ինքնուրույն հավաքել խճանկարը և գծել եզրագիծը:



Լսողական վերլուծիչ


Լսողության շնորհիվ մարդը զանազանում է միջավայրի բազմաթիվ ձայները և կողմնորոշվում նրանցում: Լսողության օգնությամբ մարդիկ ընկալում են խոսքը, հաղորդակցվում միմյանց հետ, տեղեկատվություն ստանում, սովորում: Լսողության դերը մեծ է նաև մարդու խոսքի և մտավոր զարգացման տեսանկյունից: Լսողական համակարգում արտաքին և միջին ականջը պատասխանատու են աղմուկի և ձայնային տեղեկատվություն ստանալու համար: **Լսողական դիսֆունկցիայի ցուցիչներ.** Երեխան բուռն է արձագանքում բարձր և սուր ձայներին, այն է՝ հրաժարվում է երաժշտություն և երգեր լսել, փակում է ականջները, ճչում, հիստերիկ հակազդեցություն դրսևորում, կամ հակառակը, չի արձագանքում հասցեական խոսքին, սիրում է բարձր ձայներ, վատ է հիշում բանաստեղծություններն ու երգի բառերը, հաճախ խնդրում է կրկնել:



Համի վերլուծիչ

Բերանի խոռոչում համի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը մեկնաբանելու ունակությունը պայմանավորված է համի վերլուծիչի աշխատանքով: Լեզուն ապահովում է համի զգացողությունների ընկալումը, լեզվի միջոցով հայտնաբերվում է նաև ստացված զգացողությունների բաղադրությունը և վնասակարությունը:

Համային դիսֆունկցիայի ցուցիչներ. Երեխան ընտրողական է վերաբերվում սննդին, հաճախ խեղդվում է սննդից, չի ուտում պինդ սնունդ կամ բոլոր առարկաները տանում է բերանը, սիրում է կծու, չափազանց թթու և քաղցր կերակուրներ, ծամում է ուտելու համար ոչ պիտանի առարկաներ:



Հոտառության վերլուծիչ

Մարդու հոտառությունն ըստ էության արտաքին միջավայրից եկող հոտերը մեկնաբանելու ունակությունն է: Այս գործառույթը իրականացվում է քթի խոռոչում տեղակայված հոտառական էպիթելի միջոցով, որն օդում առկա մասնիկների քիմիական կազմի մասին տեղեկատվություն է ստանում և պարզում վերջինիս անվտանգությունը կամ վնասակարությունը: Հոտառությունը (համի հետ միասին) կազմում է օրգանիզմի քիմիական զգայաընկալումը:

Հոտառական դիսֆունկցիայի ցուցիչներ. Երեխան հրաժարվում է ուտելիքից սուր հոտի պատճառով, հրաժարվում է խաղալ, եթե սենյակում տհաճ հոտ է առկա, նյարդայնանում է օծանելիքի ուժեղ հոտից կամ ուշադրություն չի դարձնում տհաճ հոտերին, չի կարողանում որոշել հոտի աղբյուրը, հոտոտում է բոլոր առարկաները՝ ուսումնասիրելով դրանք:



Շոշափելիքի վերլուծիչ

Շոշափելու զգացողությունը մաշկի միջոցով օրգանիզմ եկող տեղեկատվությունը մեկնաբանելու ունակությունն է: Մաշկը շատ նուրբ, առաձգական թաղանթ է, որը ծածկում է ամբողջ մարմինը և օրգանիզմը պաշտպանում վնասվելուց, բարձր և ցածր ջերմաստիճանների, քիմիական նյութերի վնասակար ներգործությունից ու վարակիչ հիվանդություններից: Մաշկում գտնվում են նյարդային վերջույթները, որոնց օգնությամբ մարդը զգում է ցավը, շոգը, ցուրտը, առարկաների մակերևույթների անհարթությունները կամ հարթ լինելը:

Շոշափելիքի դիսֆունկցիայի ցուցիչներ. Նման խանգարում ունեցող երեխան չի սիրում հպում, առարկաները տարբերում է շոշափելով կամ բավարար չի արձագանքում շոշափելիքի հետ կապված որոշ զգացողություններին:



Պրոպրիոցեպտիվ զգայության վերլուծիչ

Հավասարակշռությունը պահպանելու կարողությունը ենթադրում է հստակ մեկնաբանում մարմնի մասերի՝ միմյանց հետ կապվածության վերաբերյալ: Ներքին ականջում լսողության ֆունկցիա իրականացնող խխունջի հարևանությամբ գտնվում է հավասարակշռության (անդաստակային) օրգանը: Այն պահպանում է հավասարակշռությունը և կարգավորում մարմնի դիրքը տարածության մեջ:

Պրոպրիոցեպտիվ դիսֆունկցիայի ցուցիչներ. Քայլելիս ուռքերն ուժեղ հարվածում է գետնին, ամուր և կոպիտ է գրկում խաղալիքները, մարդկանց, հաճախ ընկնում է, այսինքն՝ անընդհատ գտնվում է զգայական փորձառությունների փնտրտուքի մեջ, չի կարողանում գնահատել իր մարմնի դիրքը տարածության, շարժման մեջ:



Անդաստակային՝ հավասարակշռության վերլուծիչ

Անդաստակային (վեստիբուլյար) վերլուծիչը պահպանում է հավասարակշռությունը և կարգավորում մարմնի դիրքը տարածության մեջ: Այն շարժումների և հավասարակշռության հետ կապված տեղեկատվությունը մեկնաբանելու ունակություն է:

Հավասարակշռության օրգանը բաղկացած է երեք փոխուղղահայաց, կիսաբոլոր խողովակներից և երկու՝ ձվաձև ու կլոր պարկիկներից, որոնք տեղակայված են ներքին ականջում: Վերլուծիչը տեղեկատվություն է ստանում այն մասին, թե որքան արագ կամ դանդաղ է շարժվում մարդը, պահում հավասարակշռությունը, ղեկավարում պարանոցի շարժումները, կողմնորոշվում տարածության մեջ:

Անդաստակային դիսֆունկցիայի ցուցիչներ՝ ցածր մկանային լարվածություն (տոնուս), շարժումների համակարգման խանգարում, շարժումների գերինտենսիվություն կամ թերինտենսիվություն:

Այս ամենից զատ, կարևոր է նաև անդրադառնալ սոցիալական, հուզական, խաղային և ինքնակառավարման դիսֆունկցիաներին:

Սոցիալական դիսֆունկցիայի դեպքում երեխան չի ձգտում շփվել հարազատների և հասակակիցների հետ, դժվարություններ է ունենում երկխոսության ընթացքում, դժվարանում է շփվել նաև հասակակիցների հետ:

Հուզական դիսֆունկցիայի ժամանակ երեխան նախընտրում է անհատական պարապմունքներ ուսուցիչների հետ: Խմբում իրեն անհարմար է զգում, հաճախ շեղվում է: Այսպիսի երեխաներն իմպուլսիվ են, հուզականորեն անկայուն, կարող են շուտ հիասթափվել:

Խաղային դիսֆունկցիայի պարագայում երեխան ինքնուրույն չի խաղում, նախընտրում է խաղալ միայն մոր հետ, երկար ժամանակ կատարում է նույն գործողությունները, հրաժարվում է խաղալ հասակակիցների հետ:

Ինքնակառավարման դիսֆունկցիան արտահայտվում է անհանգստությամբ, հոգնածությամբ, դյուրագրգռությամբ և այլն: Որպես կանոն, երեխային հանգստանալու համար անհրաժեշտ են հավելյալ ազդակներ (մարմինն օրորելը, մատը ծծելը, շոյելը, մատի շուրջ մազերը ոլորելը և այլն):

ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԽԱՆԳԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Զգայական ինտեգրման խանգարումների ախտանշաններն անմիջականորեն կախված են այն զգայական համակարգից, որտեղ նրանք առաջացել են:

Զգայական ինտեգրման խանգարումը կարող է առաջանալ յուրաքանչյուր զգայական համակարգում՝ տեսողական, լսողական, շոշափելիքի, հոտի, համի, անդաստակային և/կամ պրոպրիոցեպտիվ վերլուծիչների: Ախտանշանները կարող են տարբեր լինել՝ կախված խանգարման պատճառից և ենթատեսակից, ուստիև զգայական ինտեգրման խանգարումները բավականին դժվար է ախտորոշել և ճանաչել: Երեխան կարող է ունենալ թվով մեկ, երկու, կամ բոլոր յոթ զգայական համակարգերի խանգարումներ: Զգայական ինտեգրման խանգարում ունեցող յուրաքանչյուր երեխա պետք է անհատական ախտորոշում անցնի, և միջամտությունն էլ իր հերթին պետք է լինի անհատական:

Այնուամենայնիվ, չնայած զգայական ինտեգրման խանգարումների դրսևորման բազմազանությանը, ընդհանուր առմամբ այս խանգարումները կարելի է բաժանել երկու խմբի՝ գերզգայունություն և թերզգայունություն:

Գերզգայունության պարագայում երեխան ճնշվում և ընկճվում է արտաքին աշխարհից եկող սովորական զգայական ազդակներից: Նա ամեն կերպ փորձում է նվազեցնել զգայական ազդակները և հավելյալ զգացողություններ չի փնտրում: Զգայական գերզգայունությունը կարող է առաջացնել.

- ցավի ցածր շեմ
- անզգույշ վազք՝ առանց հաշվի առնելու անվտանգությունը
- աչքերը կամ ականջները հաճախակի փակելու գործողություն
- սննդի բժախնդիր նախապատվություններ կամ որոշակի կերակուրների նկատմամբ տհաճություն

- գրկախառնություններին կամ հանկարծակի հպումներին ընդդիմանալու միտումներ
- զգացողություն, որ մեղմ, թեթև հպումները չափազանց կոպիտ են
- հույզերը կառավարելու դժվարություն
- ուշադրության կենտրոնացման դժվարություն
- հարմարվողականորեն արձագանքելու դժվարություն
- վարքային խնդիրներ:

Թերզգայունություն պարագայում երեխան չի արձագանքում արտաքին աշխարհից եկող սովորական զգայական ազդակներին և պահանջում է լրացուցիչ զգայական ազդակներ: Այս երեխաները սովորաբար չափազանց ակտիվ կամ անհանգիստ են լինում: Թերզգայունությունը կարող է առաջացնել.

- ցավի բարձր շեմ
- պատերին հպվելու սովորություն
- իրերը շոշափելու գործողություններ
- իրերը բերանը տանելու սովորություն
- ամուր գրկախառնվելու ձգտում
- բախում այլ մարդկանց կամ իրերի
- անձնական տարածքի գիտակցման բացակայություն
- մարմնի ճոճում, վերջույթների թափահարում:

Զգայական ինտեգրման իրական խանգարումները սովորաբար կայուն բնույթ են ունենում, վերջիններս չի կարելի համարել անցողիկ փուլ երեխայի կյանքում՝ մտածելով, որ տարիքի հետ խնդիրն ինքնըստինքյան կլուծվի: Սա կայուն գործընթաց է, որը տեղի է ունենում ամեն օր և դժվարություններ առաջացնում տանը՝ ամբողջ ընտանիքի համար, իսկ դպրոցում՝ ուսուցիչների: Զգայական ինտեգրման իրական խանգարումները երեխաների մոտ կարող են դրսևորվել նաև հետևյալ կերպ.

- մեկ գործողությունից մեկ այլ գործողության անցում կատարելու անկարողություն, ինչը հանգեցնում է հաճախակի պոռթկումների,
- տարիքին համապատասխան առաջադրանքի կատարման և պահանջվող ժամանակի անհամապատասխանություն,
- ինքնասպասարկման ոլորտում առաջադրանքների կատարման հետ կապված դժվարություններ, որոնք հանգեցնում են հոգնածության, պոռթկումների, և, որպես կանոն, երեխան սկսում է խուսափել այդ առաջադրանքներից,
- սոցիալական իրավիճակներում կողմնորոշվելու դժվարություններ, որոնք ի հայտ են գալիս հուզական թերի կարգավորման կամ անհանգստության պատճառով,
- որոշակի զգայական ազդակների ընդունման անկարողություն (հագուստի գործվածք, սննդի բաղադրություն կամ շարժումներ):

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ

Մանկությունը մեծ դեր է խաղում զգայական ինտեգրման մեջ, երեխան ընկալում և կազմակերպում է ոչ միայն իր տեսողական և լսողական զգայությունները, այլև սեփական մարմնի զգացողությունը և ձգողականության ուժի ազդեցությունը: Զգայական ինտեգրման հենքային մակարդակն արդեն իսկ առկա է երեխայի գեներում: Թեև բոլոր երեխաները ծնվում են զգայական ինտեգրման ունակությամբ, այնուամենայնիվ նրանք պետք է զարգացնեն այն տարբեր ձևերով՝ շփվելով շրջապատող աշխարհի հետ և հարմարեցնելով իրենց մարմինն ու ուղեղը ֆիզիկական առաջադրանքներին (Lane և այլք, 2019):

Այսպիսով, զգայական ինտեգրման դիսֆունկցիայի կամ խանգարման դեպքում երեխայի ուղեղը չի կարողանում պատշաճ կերպով ընկալել և վերլուծել բազմազգայական (տարբեր վերլուծիչների միջոցով ստացվող) տեղեկատվությունը: Այս դեպքում առաջանում է գերզգայունություն (չափազանցված արձագանք զգայական գրգռիչներին) կամ թերզգայունություն (անբավարար արձագանք համապատասխան զգայական գրգռիչներին):

Որքան վաղ բացահայտվի զգայական ինտեգրման խնդիրը երեխայի մոտ, այնքան ավելի արդյունավետ կլինի զարգացնող, վերականգնող աշխատանքը երեխայի հետ: Վաղ միջամտությունը կկանխի երկրորդային, ուղեկցող խնդիրների առաջացումը, որոնք կարող են արտահայտվել վարքային շեղումներով, ուշադրության, սոցիալական փոխներգործության, ինքնակառավարման և հուզական համակարգի խնդիրներով:

Այսպես, օրինակ՝ ներկայումս նկատվում է ոչ ադեկվատ, ագրեսիվ, վարքային խանգարումներ ունեցող երեխաների թվի աճի միտում: Գիտնականների մեծամասնությունը դա կապում է այն երևույթի հետ, որ երեխաների մոտ ստացված զգայական գրգռիչներին ի պատասխան չի զարգանում հարմարվողական արձագանքը, ինչը հանգեցնում է խանգարման՝ ուշադրության պակասի և հիպերակտիվության համախտանիշի: Այս

համախտանիշը զարգացման նյարդավարքային բնույթի խանգարում է, որում վառ արտահայտվում է երեխաների հիպերակտիվությունը և ուշադրության պակասը: Նյարդաբանության մեջ այս խանգարումը համարվում է կայուն քրոնիկ համախտանիշ, որն առ այսօր միանշանակ հաղթահարման միջոցներ չունի (Danielson, Bitsko, Ghandour, Holbrook, Kogan, Blumberg, 2018; Friel, 2007):

Զգայական ինտեգրման խանգարումները կարող են առաջանալ ինչպես տարբեր ախտորոշումների ժամանակ (աուտիզմ, հիպերակտիվություն և ուշադրության պակաս, գենետիկ համախտանիշներ և սովորելու խանգարումներ), այնպես էլ առանց որևէ այլ ախտորոշման: 2009 թվականին կատարված մի ուսումնասիրության համաձայն՝ յուրաքանչյուր 6-րդ երեխա ունի զգայական ինտեգրման խնդիրներ, որոնք դժվարացնում են նրա ուսումնառության գործընթացը դպրոցում (Ben-Sasson, Carter, Briggs-Gowan, 2009): Այլ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աուտիզմ ունեցող երեխաների 66%-ը և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների 32%-ը որոշակի տարբերություններ են ցուցաբերում զգայական վարքագծի մեջ (Green, Chandler, Charman, Simonoff, Baird, 2016):

2020 թվականին կատարված հետազոտությունները փաստում են, որ զգայական ինտեգրման խանգարումները կանխագուշակում են հետագա արգելակումը վերահսկելու ճանաչողական դիսֆունկցիաները, լսողական կայուն ուշադրության և կարճաժամկետ բանավոր հիշողության խնդիրները դպրոցում (Pastor-Cerezuela, Fernández-Andrés, Sanz-Cervera, Marín-Suelves, 2020):

Զգայական ինտեգրման խանգարումները մանկական տարիքում դրսևորվում են տարբեր կերպ՝ առարկայի տարրերի վրա ուշադրությունը կենտրոնացնելու անկարողությամբ, բազմաթիվ սխալներով, ուսումնական կամ այլ առաջադրանքների կատարման ընթացքում ուշադրությունը պահպանելու դժվարությամբ կամ անկարողությամբ և այլն: Շատ հաճախ երեխան չի լսում իրեն ուղղված խոսքը, չգիտի ինչպես հետևել հրահանգներին և

ավարտին հասցնել աշխատանքը, ինքնուրույն չի կարողանում պլանավորել կամ կազմակերպել առաջադրանքների կատարումը, փորձում է խուսափել երկարատև մտավոր ջանք պահանջող խնդիրներից և առաջադրանքներից, անընդհատ կորցնում է սեփական իրերը, ցուցաբերում է մոռացկոտություն, հեշտությամբ շեղվում է: Հիպերակտիվությունը դրսևորվում է ձեռքերի կամ ոտքերի անհանգիստ շարժումներով՝ տեղում շարժվելով, անհանգստությամբ: Զգայական ինտեգրման խանգարումներ ունեցող երեխաները բավականին անփույթ են, չարաճճի, հաճախ նետում կամ կոտրում են իրերը, խաղալիքները, կարող են ագրեսիվություն դրսևորել, երբեմն խոսքի զարգացման մեջ ետ են մնում իրենց հասակակիցներից:


Այսպիսի երեխաների ծնողներն առաջին անգամ նման խնդիրների և բողոքների բախվում են, երբ երեխան սկսում է հաճախել մանկապարտեզ կամ տարրական դպրոց: Դաստիարակներին ու ուսուցիչներին անհանգստացնում է երեխայի այդ պահվածքը, քանի որ նա չգիտի, թե ինչպես շփվել խմբակիցների հետ, ընդունակ չէ սոցիալականացման, կռվում է, կոպիտ խոսում դաստիարակի կամ ուսուցիչների հետ: Շատ ծնողներ ամաչում են երեխայի նման պահվածքի պատճառով, բայց երեխան մեղավոր չէ: Ուղեղում տեղի ունեցող գործընթացները կարող են լինել շեղվող վարքի պատճառ՝ կապված զգայական ինտեգրման խանգարումների հետ, որոնց հիմքում նյարդային համակարգի գործունեության արգելակման գործընթացների թուլացումներն են:

**ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԽՈՐՀՈՒՐԴ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ**

Զգայական ինտեգրման մեթոդով իրականացվող թերապիան կախված է երեխայի առանձնահատկություններից և անհատական կարիքներից: Սակայն, անկախ ամեն ինչից, մեթոդի կիրառման հիմնական նպատակն է օգնել երեխային սովորել ճիշտ օգտագործել զգայական բոլոր համակարգերը ամենօրյա գործողություններում:

Զգայական տեղեկատվության ընկալման և մշակման խնդիրների հաղթահարումը կոչվում է զգայական թերապիա: Զգայական թերապիան, ըստ էության, երեխայի ներգրավումն է թերապևտիկ գործընթացի մեջ զվարճալի, խաղային ձևով՝ սովորեցնելով նրան պատշաճ կերպով արձագանքել շրջակա միջավայրի փոփոխություններին:

Ստորև ներկայացվում են զգայական ինտեգրման մեթոդի թերապևտիկ առաջադրանքներ՝ խաղերի մի քանի օրինակ, որոնք կարող են կիրառելի լինել ինչպես ծնողների, ուսուցիչների, այնպես էլ աջակցող թիմի մասնագետների կողմից:



ԽՈՐՀՈՒՐԴ - ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1

Խաղեր ծեփամածիկով, կավով, խմորով, հատուկ փրփուրով և նմանատիպ զանգվածներով

Երեխաները շատ են սիրում խաղալ ծեփամածիկով, կավով, խմորով, փրփուրով և նմանատիպ այլ զանգվածներով, ինչը շատ օգտակար է շոշափելիքի հետ կապված խնդիրներ ունեցող փոքրիկների համար: Ներկայումս վաճառքում առկա է ծեփամածիկի հսկայական ընտրություն՝ տարբեր որակի, խտության, գույնի, հոտի և այլն:



Ցանկալի է երեխայի հետ ծեփամածիկով և խմորով աշխատել սկսել հնարավորինս վաղ տարիքում: Օրինակ՝ խմորով աշխատելիս նախևառաջ կարելի է հատուկ բաղադրատոմսով խմոր հունցել, ինչն անկասկած նրան մեծ ուրախություն կպատճառի և կհարստացնի նրա շոշափելիքի փորձը: Երեխաները պետք է շոշափեն և խաղան տարբեր նյութերով՝ ու հյուսվածքներով՝ շոշափելիքի նորմալ ընկալումը զարգացնելու համար:

Եթե փոքրիկը հրաժարվում է ծեփամածիկով, խմորով, կամ նմանատիպ զանգվածներով խաղալ, ապա առավել ևս կարևոր է երեխային հրապուրել նման խաղերով: Այս դեպքում առաջարկվում է կիրառել փրփուրը՝ որպես այլընտրանքային տարբերակ:

ԽՈՐՀՈՒՐԴ - ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

«Ծանր աշխատանք»

Գերակտիվ երեխաները, ովքեր հաճախ կոտրում են իրերը, ցատկում, վազում, տեղում հանգիստ նստել չեն կարողանում, ունենում են ծանրային վարժությունների կարիք: Նյարդային համակարգի կանոնավոր ծանրաբեռնվածությունը օգնում է այս երեխաներին հանգստանալ: Համաչափ ծանրաբեռնվածության գործողությունները դրական ազդեցություն են ունենում նրանց մարմնի, մկանների և հոդերի վրա: Շատ արդյունավետ են ծանր իրերով վարժությունները, երբ երեխան մի կետից մյուս կետ է տեղափոխում ծանրությունը, թռիչքները բատուտի վրա, մագլցումը պարանով կամ պատի ձողերով (շվեդական պատ), առարկաները հրելը կամ ճոճվելը: Այս երեխաների համար հատկապես օգտակար է «սեղմված» զգալը, երբ նրանց մարմնի վրա խորը ճնշում է գործադրվում:



Ընդհանրապես, նման վարժություններն անհրաժեշտ են բոլոր երեխաներին: Բայց ռեակտիվ նյարդային համակարգ ունեցող երեխաների համար դա կրկնակի անհրաժեշտություն է, քանի որ հենց ակտիվ գործունեությունն է նրանց տալիս անհրաժեշտ զգայական ծանրաբեռնվածություն, ինչի արդյունքում երեխան կարողանում է կարգավորել իր վարքը և գրգռման մակարդակը:

Մասնագետների, դպրոցի ուսուցիչների համար կարևոր է իմանալ, որ միշտ ցանկալի է հաջորդականությամբ առաջարկել երեխային ֆիզիկական վարժություններ և հանձնարարություններ, որոնք պահանջում են հանգիստ,

նստակյաց վիճակ և ուշադրության կենտրոնացում:

ԽՈՐՀՈՒՐԴ - ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3


«Թունելներով և վրաններով խաղեր»

Ե՛վ թունելները, և՛ վրանները շատ օգտակար են զգայական ինտեգրման խնդիրներ ունեցող երեխայի համար: Այստեղ ամենակարևորը երևակայությունն է և տարբեր սցենարներ մտածելը:

Թունելները օգնում են զարգացնել երեխայի խոշոր շարժումները, մարմնի զգացողությունը: Պարզապես թունելով սողալով՝ երեխան զարգացնում է մարմնի կոորդինացիան: Երեխայի

շոշափելիքի ունակությունը կարելի է զարգացնել թունելում առարկաներ կամ գորգ տեղադրելով: Թունելի թափահարումը, երբ երեխան գտնվում է ներսում («իսկական երկրաշարժ» առաջացնելը), բարելավում է երեխայի պրոպրիոցեպտիվ և վեստիբուլյար համակարգերի աշխատանքը:

Վրանները ապահովում են անհրաժեշտ անվտանգ միջավայր գերզգայուն երեխաների համար: Այստեղ երեխան կարող է մնալ այնքան ժամանակ, որքան ցանկանում է, կարող է նույնիսկ ննջել, հանգստանալ կամ կարդալ (կարող եք այնտեղ դնել փափուկ բարձեր, վերմակներ, ականջակալներ հաճելի երաժշտությամբ, լամպեր, գիշերային լույսեր՝ հանգստի մթնոլորտ ստեղծելու համար):



ԽՈՐՀՈՒՐԴ - ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4

Անդաստակային/Վեստիբուլյար շարժումներ

Երեխաների համար շարժումը պարտադիր նախադրյալ է օրինաչափ զարգացման համար: Սակայն կան երեխաներ, որոնք շարժվել չեն սիրում, իսկ ոմանք էլ չեն կարողանում կանգնել: Այս դեպքերում շատ հնարավոր է, որ երեխան ունենա վեստիբուլյար կամ պրոպրիոցեպտիվ խնդիրներ: Վեստիբուլյար շարժումները (կամ պրոպրիոցեպտիվ խթանումը) կարող են ուրախացնել և ակտիվացնել երեխային կամ, ընդհակառակը, հանգստացնել նրան: Ամեն դեպքում, նման խթանումն անհրաժեշտ է և պետք է թերապիայի մաս կազմի: Ստորև ներկայացվում են մի քանի միջոցներ այդ գործընթացը երեխայի հետ կամ երեխայի համար ապահովելու համար.

- փակ բատուտներ
- ջրային ցատկեր (լողավազան կամ լիճ)
- ճոճանակ
- ճոճվող խաղալիքներ
- սկուտերներ
- սքեյթբորդներ
- չմուշկներ
- շվեդական պատ
- թերապևտիկ մեծ գնդակներ և այլն:



ԽՈՐՀՈՒՐԴ - ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5 Բերանի շարժիչ գործողություններ

Կան երեխաներ, որոնք սիրում են բերանը տանել ամեն ինչ և ծամել: Դա կարող է լինել սեփական հագուստը, մատիտներ, փոքր խաղալիքներ, ավելի ծանր դեպքերում՝ մատները և այլ ոչ համապատասխան առարկաներ: Այս պարագայում երեխաները սովորաբար փնտրում են շոշափելիքի և պրոպրիոցեպտիկ ազդակներ և փորձում այդ պահանջը բավարարել ծամելու միջոցով, ինչը, հնարավոր է՝ հանգստացնում է իրենց:

Այս պարագայում երեխային կարելի է առաջարկել ձողի միջոցով փուչիկ փչել, ծղոտով շատ թանձր կաթնային կամ այլ տիպի կոկտեյլ ըմպել, շրթհարմոնի վրա փչել: Զգայական ինտեգրման այս պարզ գործողությունները կարող են օգնել բավարարել երեխայի՝ բերանային շարժիչ գործողություններ կատարելու կարիքները:

Կարելի է առաջարկել նաև մաստակ ծամել կամ շատ խրթխրթան ուտելիք օգտագործել, հատուկ ծամելու համար նախատեսված խաղալիքներ տալ երեխային օրվա ընթացքում և այլն:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նաև այն երեխաներին, ովքեր դժվարանում են խոսել, ուտել կամ ոչինչ չեն ուտում, բացի իրենց նախընտրած որոշակի ուտելիքից, օրինակ՝ խնձոր կամ մածուն: Այս խմբի երեխաների հետ աշխատելիս նպատակահարմար է շատ կիրառել սնունդը խաղային գործընթացում, սննդից պատրաստել խաղալիքներ կամ կենդանիներ, միասին ինչ-որ ուտեստ պատրաստել և այլն (SPD, 2023):



ԽՈՐՀՈՒՐԴ - ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6

Արոմաթերապիա

Արոմաթերապիան հիանալի թերապևտիկ միջոց է զգայական ինտեգրման խանգարումներով (և նույնիսկ առանց խանգարումների) երեխաների համար, ովքեր որոշակի հոտեր զգալու դժվարություններ ունեն կամ գերզգայուն են հոտերի նկատմամբ:

Արոմաթերապիայի միջոցները (ներառյալ արոմաթերապիայի սարքերը, յուղերը, մոմերը, դիֆուզորները և այլն), կարող են օգնել երեխային հարմարվել և գերզգայունություն չցուցաբերել ոչ ցանկալի հոտերի առկայության պարագայում, կամ օգտագործել վերջիններս թուլանալու և հանգստանալու համար (SPD, 2023):

Կարևոր է հիշել, որ տարբեր հոտեր տարբեր ազդեցություն են ունենում, և կախված կիրառելու նպատակից, տեղից և ժամանակից՝ անհրաժեշտ է ընտրել ճիշտ հոտեր: Օրինակ, եթե դարչինը կարող է ակտիվացնող, խթանող ազդեցություն ունենալ, ապա նարդոսը (լավանդան) կարող է հանգստացնող ներգործություն թողնել:

Հոտերի նկատմամբ գերզգայուն երեխաներին խորհուրդ է տրվում գրպանում ունենալ արոմաթերապիայի յուղի շիշ կամ բարձիկ, որպեսզի երեխան կարողանա զգալ այդ հոտը օրվա ընթացքում, երբ իր համար տհաճ իրավիճակում է հայտնվում (անանուխը այս դեպքերում արդյունավետ միջոց է) (SPD, 2023):

ԽՈՐՀՈՒՐԴ - ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7

Օգնություն ձեռագիրը ձևավորելու գործում

Ձգայական ինտեգրման խանգարումներ ունեցող երեխաներից շատերը ունենում են ձեռքով գրելու խնդիրներ: Գրելու ընթացքում նրանք կարող են շատ ջանք գործադրել, սակայն չստանալ ցանկալի արդյունքը, գրիչը սեղմում են կամ շատ ուժեղ, կամ հակառակը՝ շատ թեթև, ձեռագիրը անընթեռնելի է, գրելու գործընթացը սովորականից ավելի երկար է տևում, երեխայի ձեռքը շուտ է հոգնում և ցավում, տառերը հայելանման են և այլն: Երեխան չի ընկալում իրեն արված դիտողությունները, և նրա ձեռագիրը շարունակում է մնալ անընթեռնելի, իսկ գրված տեքստը՝ սխալ: Վերջին երկուսը խնդրի առկայության առաջին նշաններից են, և հաճախ հայտնաբերվում են ծնողների կամ ուսուցիչների կողմից: Նկատելի է, որ երեխան գրիչը կամ մատիտը բռնում է շատ անհարմար, կարող է դժվար լինել նաև մկրատի օգտագործումը՝ կտրելու գործողություն կատարելը: Դժվարանալու պատճառով երեխան սկսում է խուսափել այդ գործողություններից և հիասթափություն է ապրում:

Այս ամենից խուսափելու համար գրելու, կտրելու, նկարելու գործընթացները երեխայի համար պետք է զվարճալի դարձնել: Ձեռագիրն ու մանր շարժունակությունը բացարձակապես կարևոր հմտություններ են, որոնք երեխաները պետք է զարգացնեն դպրոցում և տանը՝ իրենց կարողությունները առավելագույնի հասցնելու համար:

Ձեռագրի խնդիր և դժվարություններ ունեցող երեխաներին կարելի է առաջարկել լաբիրինթներ, որտեղ երեխան մատով կամ հաստ թաղքաներկով կկարողանա գտնել պահանջվող ելքը, այնուհետև կարելի է առաջարկել տարբեր չափի խճանկարներ՝ զուգահեռաբար զարգացնելով երեխայի մանր շարժունակությունը: Այս երեխաներն ավելի հեշտությամբ կարող են գրել ցանկացած ուղղահայաց մակերեսի վրա, ուստի ցանկալի է օգտագործել սեղանի մոլբերտներ, գրատախտակներ և ցանկացած ուղղահայաց մակերես:

Զվարճալի առաջադրանքների շարքից են կրեմի, փրփուրի վրա կամ փրփուրով տառեր գրելը սեղանի, ապակու, հայելու կամ մուրեքի վրա: Ցանկալի է նաև խաղեր խաղալ՝ օգտագործելով աքցան կամ սննդի համար նախատեսված փայտիկներ, ուղեկցել այս գործընթացը երաժշտությամբ (գոյություն ունի ձեռագրի շտկման երաժշտական ծրագիր) (SPD, 2023):

ԽՈՐՀՈՒՐԴ - ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8

Սոցիալական հմտությունների զարգացում

Ձգայական ինտեգրման խանգարումներ ունեցող երեխաները բազմաթիվ մարտահրավերների են հանդիպում իրենց հասակակիցների հետ հաղորդակցման և շփման գործընթացում: Առկա խոչընդոտները կարող են լուրջ խնդիրներ առաջացնել ինչպես երեխայի ընդհանուր, բնականոն զարգացման գործընթացում, այնպես էլ դառնալ ցածր ինքնագնահատականի ձևավորման և մեկուսացման նպաստող նախապայման (SPD, 2023):

Այս երեխաները, լինելով գերակտիվ, չափազանց եռանդուն, անկարող են տեղում նստել, իմպուլսիվ են, վախկոտ, ագրեսիվ, երբեմն՝ չափազանց կոպիտ, ուսուցման դժվարությունների պատճառով բացասաբար են ընկալվում հասակակիցների կողմից և հաճախ պիտակավորվում: Շատ դեպքերում մյուս երեխաները խուսափում են նրանցից, քանի որ իրենց պատկերացմամբ նրանց հետ «դժվար» է խաղալ:

Այս երեխաների հետ թերապևտիկ գործընթացը կամ աջակցման աշխատանքները անհրաժեշտ է սկսել հնարավորինս վաղ տարիքում, քանի դեռ համապատասխան սոցիալական հմտությունների բացակայությունը չի դարձել մերժման և մեկուսացման պատճառ:

Երեխաների հետ զգայական ինտեգրման գործողություններ իրականացնելիս հաճախ պետք է աշխատել խմբերով: Խմբային աշխատանքը և խմբային միջոցառումները սոցիալական հմտություններին առնչվող ցանկացած խնդրի լուծման և բարելավման լավագույն միջոցներից են:

Խմբային աշխատանքում ներգրավված երեխան սովորում է կարդալ սոցիալական նշանները, արձագանքել իր հասակակիցներին, սպասել, հերթափոխել, հաղթել կամ պարտվել պատշաճ կերպով և կիսվել նմանատիպ փորձառություններով: Հաճախ շատ

արդյունավետ է նաև հասակակիցների հետ նոր հմտություններ սովորելը, երբ երեխաները մեկը մյուսին դուրս են բերում իրենց «պատյանից» և ստիպում փորձել նոր բաներ, կամ հանգստացնում մեկը մյուսին զուտ դիտելով, խրախուսելով կամ մոդելավորելով համապատասխան վարքագիծ:

Այս երեխաների հետ աշխատելիս ցանկալի է կիրառել սոցիալական հմտություններ զարգացնող բազմապիսի գործողություններ և խաղեր, որոնք կարելի է խաղալ մասնագետի, ուսուցչի կամ ծնողի հսկողությամբ և առաջնորդությամբ: Սոցիալական հմտությունները շատ կարևոր են: Այդ հմտությունների զարգացումը զգայական ինտեգրման գործողությունների և աջակցության անբաժան մասն է (SPD, 2023):

ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ

Երբ աշխատում ենք զգայական ինտեգրման խանգարում ունեցող երեխայի հետ, շատ կարևոր է հաշվի առնել վերջինիս առանձնահատկություններն ու կարիքը և ոչ նրա ախտորոշումը: Անհրաժեշտ է դիտարկել երեխային, ծանոթանալ նրա ուժեղ և թույլ կողմերին, գնահատել, այնուհետև համապատասխան արձագանք տալ յուրաքանչյուր երեխայի զգայական կարիքներին:

1) Անդաստակային/վեստիբուլյար ազդակներ

Մարդու անդաստակային/վեստիբուլյար համակարգը տեղակայված է ներքին ականջում: Այն արձագանքում է ձգողականության փոփոխություններին և, հետևաբար, ակտիվանում է շարժումներով՝ նպաստելով մարդու հավասարակշռության ու մկանային տոնուսի պահպանմանը: Շարժումը հիմնականում ազդեցություն է ունենում երեխայի գրգռման մակարդակի վրա և կարող է օգտագործվել որպես հանգստացնող միջոց զգայական ազդակներին ճիշտ պատասխան ձևավորելու ընթացքում (DPT, 2023): Օրինակ՝ 15 րոպե ճոճանակի վրա ճոճվելը՝ որպես վեստիբուլյար զգայական ազդակ, կարող է թողնել ամենահզոր և ամենաերկարատև ազդեցությունը երեխայի վրա (4-8 ժամ) (DPT, 2023):

Հաճախ գերզգայուն երեխային, ով չափից ավելի ուժեղ է արձագանքում զգայական ազդակներին կամ ունի, այսպես կոչված՝ զգայունակության բարձր շեմ, անհրաժեշտ է կանխատեսելի, ռիթմիկ, դանդաղ շարժում/ձայն/հայում: Այս դեպքում երեխան կարողանում է վերահսկել իրավիճակը և օգուտ քաղել նրանից: Թերզգայուն երեխային, ով չի արձագանքում զգայական ազդակներին կամ ունի զգայունակության ցածր շեմ, կարող են օգտակար լինել արագ, անկանխատեսելի, ոչ ռիթմիկ, կոշտ ու կոպիտ շարժումները:

Անդաստակային/վեստիբուլյար ազդակներ են առաջացնում հետևյալ վարժությունները.

- թերապևտիկ գնդակի վրա թռչկոտելը
- ճոճաթոռի վրա ճոճվելը
- ճոճանակի վրա ճոճվելը
- գրասենյակային աթոռի վրա նստած դիրքում պտույտները
- թերապևտիկ գնդակի վրայով գլորվելը
- գլխիվայր կախվելը
- սալտոները
- բատուտի վրա թռիչքները
- վերմակի մեջ փաթաթված գլորումները
- պտտվող ճոճանակի վրա նստելը
- ցանցաճոճով կողային ճոճը (DPT, 2023):



2) Պրոպրիոցեպտիվ ազդակներ

Պրոպրիոցեպցիան, որն անվանում են նաև «մարմնի դիրքի զգացողություն», վերաբերում է մկաններից, ջլերից, հողերից և կապաններից եկող ազդակներին: Այն պատասխանատու է մարմնի դիրքի և նրա մասերի վրա գործադրվող ուժի ներքին ընկալման համար (DPT, 2023): Պրոպրիոցեպտորների աշխատանքը հեշտացվում է մկանների ձգման/երկարացման, սեղմման/կարճացման և/կամ կծկելու միջոցով: Պրոպրիոցեպցիան «արթնացնում է» մկանները՝ խթանելով շարժումների առաջացումը, նրանց դասակարգված վերահսկողությունը, հավասարակշռությունը և մկանային ուժը:

Պրոպրիոցեպտիվ ազդակներ են առաջացնում հետևյալ վարժությունները.

- հողերի և մկանների սեղմումները
- ծանր առարկաներ կրելը
- ծանր առարկաները հրելը
- սկուտեր տախտակի վրա մեկ ուրիշին քաշելը կամ հրելը
- խեցգետնի նման քայլելը
- արջի նման քայլելը
- հրումները
- չորեքթաթ սողալը
- չոչ անելը
- բատուտի վրա թռիչքները
- վազելը
- թերապևտիկ գնդակի վրա տարբեր գործողությունները
- մեծ բարձի մեջ «մխրճվելը» (DPT, 2023):

3) Շոշափելիքի ազդակներ

Շոշափելիքի համակարգը մարդու մարմնի ամենամեծ զգայական համակարգերից է, որը կարևոր դեր է խաղում շրջապատող միջավայրի հետ փոխազդեցության գործընթացում: Շոշափելիքի համակարգը պատասխանատու է առարկաների չափը, կառուցվածքը, որակը (կոշտ, փափուկ, սուր, հարթ և այլն) զգալու համար: Այն երեխային տեղեկատվություն է փոխանցում հպման միջոցով (DPT, 2023): Այնպիսի փոփոխականները, ինչպիսիք են քերմաստիճանը, ճնշումը և հյուսվածքը, որոշվում են հպման միջոցով, և ըստ այդմ էլ ձևավորվում է համապատասխան արձագանքը: Գերզգայուն երեխաները կարող են չափազանց ուժեղ արձագանքել շոշափելի ազդակներին: Թերզգայուն երեխաները, հնարավոր է՝ անգամ չարձագանքեն արտաքին աշխարհից եկող շոշափելիքի ազդակներին:

Երկու դեպքում էլ կարող են գրանցվել երեխաների կողմից օբյեկտների մանիպուլյացիայի և ճանաչման, ինչպես նաև միջավայրում արդյունավետ փոխգործակցության դժվարություններ (DPT, 2023): Այնուամենայնիվ, կարևոր է իմանալ, որ ամուր հպումը հանգստացնում է, մինչդեռ թեթև հպումը զգուշացնում է և կարող է հանգեցնել պաշտպանիչ կամ խուսափողական արձագանքի:

Շոշափելիքի պաշտպանողականություն կամ բարձր զգայունություն ունեցող երեխային պետք է հնարավորինս զերծ պահել հարկադիր հպումներից և անձանոթ իրեր ու առարկաներ շոշափելուց, նրան չի կարելի պարտադրել շոշափելիքի գործողություններ իր կամքին հակառակ, քանի որ առաջացող սթրեսային իրավիճակը կխանգարի թերապևտիկ գործընթացին և նոր հմտությունների ուսուցմանը (DPT, 2023):

Հպման մակարդակներ

1. ինքնահպում
2. առարկաների հպում (խոզանակի կիրառում, թերապևտիկ գնդակի գլորում երեխայի մարմնի տարբեր մասերի վրայով, վերմակի մեջ երեխային փաթաթելը և այլն)
3. հպում այլ անձանց (այսինքն՝ մերսում, հողերի սեղմում, գրկախառնություն)

Շոշափելիքի ազդակներ են առաջացնում

հետևյալ վարժությունները.

- ջրախաղը
- ավազով խաղը
- սափրվելու կրեմով կամ փրփուրով խաղը
- ծեփամածիկով, խմորով, կավով խաղերը
- մատներով նկարչությունը
- խոզանակով մաքրելու գործողությունները (DPT, 2023):



4) Ուշադրության կենտրոնացման և ներգրավման ազդակներ

Նախքան կարդալ և հաշվել սովորելը երեխան պետք է իմաստավորի իր տեսածն ու լսածը, կարողանա պլանավորել իր շարժումները և կազմակերպել վարքը: Այս բոլոր կարողությունները կախված են նրանից, թե երեխայի նյարդային համակարգը որքան արդյունավետ է կազմակերպում զգայարաններից ստացած տեղեկատվությունը: Մինչև 7 տարեկանը երեխայի ուղեղը հիմնականում գործում է որպես զգայական մշակման սարք: Սա նշանակում է, որ նա իրեն շրջապատող աշխարհը, առարկաներն ու երևույթները ընկալում, դրանց վերաբերյալ եզրակացություններ է անում՝ հիմնվելով զուտ զգայությունների վրա: Փոքր երեխաները չունեն զարգացած վերացական մտածողություն և չեն գործում վերացական հասկացություններով: Նրանք հիմնականում զբաղվում են իրերն ընկալելով և մարմինը շարժելով իրենց զգացողություններին համապատասխան: Նրանց հարմարվողական արձագանքները հաճախ մկանային կամ շարժողական բնույթ են կրում, ուստի կյանքի առաջին յոթ տարիները կոչվում են զգայական շարժողական զարգացման շրջան:

Ուշադրության կենտրոնացումը խթանող գործողությունները հաճախ կոչվում են կազմակերպչական գործողություններ, քանի որ դրանք սովորաբար նպաստում են երեխայի զգայական համակարգերի՝ ավելի հավասարակշռված դառնալուն, ինչը հանգեցնում է ուսուցման, հաղորդակցության, քնի, ուտելու և այլ գործառույթների բարելավմանը:

Ուշադրության կենտրոնացմանը նպաստող ազդակներ են առաջացնում հետևյալ վարժությունները.

- ցատկերը անկողնու, բատուտի վրա, բազմոցին
- ժայռեր, աստիճաններ կամ պատի վրա բարձրանալը
- պարանոլ մագլցելը
- պարանի օգնությամբ տեղափոխվելը մի կետից մյուսը

- թունելի միջով սողալը
- բացօթյա ճոճանակով ճոճվելը
- փակ տարածքում գտվող ճոճանակով ճոճվելը
- երեխային վերմակի մեջ օրորելը
- հեծանիվ քշելը
- ծանր առարկաներ, պարկեր, դույլեր տեղափոխելը:

ԶԳԱՅԱԿԱՆ ՍՆՆԴԱԿԱՐԳ/ԴԻԵՏԱ

Զգայական ինտեգրման խանգարում ունեցող երեխայի համար շատ դեպքերում անհրաժեշտ է սահմանել անհատականացված «զգայական սննդակարգ», որը հիմնված է յուրաքանչյուր երեխայի յուրահատուկ զգայական կարիքների վրա: Զգայական սննդակարգը կամ դիետան երեխայի առօրյայում ներառում է հատուկ, համապատասխան **զգայական գործողություններ**, որոնք հարուստ են վեստիբուլյար, պրոպրիոցեպտիվ և/կամ խորը ճնշմամբ հպման զգայություններով:



Տանը և դպրոցում իրականացվող հատուկ մշակված զգայական սննդակարգի գործողություններն օգնում են երեխային կարգավորել զգայարանները և պատշաճ կերպով մշակել զգայարանների միջոցով ստացված տեղեկատվությունը, մասնակցել ուսումնական գործընթացին և նվազեցնել սթրեսային իրավիճակները: Շրջակա միջավայրի փոփոխությունները և վարքագծային ռազմավարությունները նույնպես կարող են ներառվել երեխայի զգայական սննդակարգում (այսինքն՝ ժամանակաչափ, նկարների աղյուսակ, հատուկ ծանրացված ժիլետ, փչովի նստատեղի բարձիկ) ընդհանուր թերապևտիկ գործընթացին աջակցելու համար (DPT, 2023):

Ինչպես ցանկացած սննդակարգ նշանակում և վերահսկում է բժիշկը, այնպես էլ զգայական սննդակարգը նշանակվում է էրգոթերապիստի կողմից և իրականացվում միմիայն

նրա հսկողության ներքո: Զգայական սննդակարգի նշանակումը պահանջում է մասնագիտական հմտություն, արվեստ, գիտելիք և փորձ:

Երեխային զգայական սննդակարգ նշանակելիս պետք է հստակ առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

1. Երբեք չստիպել երեխային կատարել որևէ գործողություն. հարկադրաբար զգայական սննդակարգ պահել հնարավոր չէ: Զգայական ինտեգրման խթանման գործողությունները տնային աշխատանք կամ բժշկություն չեն, և լավագույն արդյունք կարող են ապահովել միայն այն ժամանակ, երբ երեխան ուզում է կատարել դրանք և մասնակից լինել դրանց: Կարևոր է հիշել, որ շատ դեպքերում երեխաները կարող են հրաժարվել զգայական գործունեությունից, քանի որ այն ճնշող է նրանց յուրահատուկ զգայական համակարգի համար: Օրինակ՝ մատներով ներկելը, ինչը պետք է շատ հաճելի լինի երեխայի համար, իրականում կարող է ցավոտ լինել: Նոր զգայական ազդակները կարող են հրաշալի ազդեցություն ունենալ երեխայի զարգացման վրա, բայց երբ նրան ստիպում են ներգրավվել, սովորաբար, դա հակառակ արդյունքի է հանգեցնում:
2. Երեխայի զգայական կարիքները կարող են փոփոխվել օրեցօր կամ նույնիսկ ժամ առ ժամ: Պետք է հիշել, որ եթե որևէ գործողություն այսօր արդյունք չի տալիս, դա չի նշանակում, որ վաղը չի ստացվելու: Ընդհանուր գաղափարն այն է, որ ունենանք զգայական գործողություններով հագեցած օր և յուրաքանչյուր գործողություն ընտրելու հնարավորություն:
3. Զգայական սննդակարգում ներառված գործողությունները միտված են ոգեշնչելու, զվարճացնելու, ուրախացնելու երեխային, այլ ոչ ծանրաբեռնելու: Երեխային ներգրավելիս ցանկալի է նույն գործողությունները կատարել նրա հետ: Երբեմն երեխան պետք է հետևի ձեզ: Օրինակ՝ դանդաղ թրջում եք ձեր ոտքերը՝ ցույց տալով,

թե գործընթացը ինչքան հաճելի է, այնուհետև հրավիրում եք երեխային միանալ ձեզ: Անհրաժեշտության դեպքում պետք է փորձել մի քանի անգամ՝ երեխայի դրական արձագանքը ստանալու նպատակով:

Սովորաբար զգայական սննդակարգ նշանակելիս աջակցող մասնագետը հստակ կազմում է հանձնարարությունների, առաջադրանքների փաթեթ, որտեղ մանրամասն նկարագրվում են երեխայի կողմից կատարվելիք գործողությունները: Այս փաթեթն իր տեղն է գտնում, այսպես կոչված՝ «Զգայական սննդակարգի աշխատանքային թերթիկում», որի ձևանմուշը ներկայացված է Աղյուսակ 2-ում, իսկ լրացված օրինակը՝ Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 2. Զգայական սննդակարգի աշխատանքային թերթիկ

ԶԳԱՅԱԿԱՆ ՍՆՆԴԱԿԱՐԳ			
Ամիս-ամսաթիվ			
Երեխայի անուն, ազգանուն			
Աջակցող մասնագետ			
Օրվա հանձնարարություն/ գործողություն	Վարքագիծ	Զգայական հանձնարարություն/ գործողություն	Արդյունք

«Զգայական սննդակարգի աշխատանքային թերթիկից» բացի, մասնագետների կողմից լայնորեն կիրառվում է նաև երեխայի «Զգայական սննդակարգի օրակարգը», որի ձևանմուշը ներկայացված է Աղյուսակ 3-ում: Այն ավելի մանրամասն նկարագրում է երեխային առաջարկվող զգայական գործողությունը օրվա ժամանակահատվածի կտրվածքով:

Աղյուսակ 3. Զգայական սննդակարգի օրակարգ

ԶԳԱՅԱԿԱՆ ՍՆՆԴԱԿԱՐԳԻ ՕՐԱԿԱՐԳ				
Ամիս-ամսաթիվ				
Երեխայի անուն, ազգանուն				
	Առավոտ	Կեսօր	Երեկո	Գիշեր
Երկուշաբթի				
Երեքշաբթի				
Չորեքշաբթի				
Հինգշաբթի				
Ուրբաթ				
Շաբաթ				
Կիրակի				

Զգայական սննդակարգի կազմակերպման համար առաջարկվում են տարբեր մոտեցումներ, նյութեր, առարկաներ և խաղեր: Ծնողը, ուսուցիչը կամ մասնագետը դրանց կարող է ծանոթանալ և կիրառել զգայական ինտեգրման խանգարում ունեցող երեխայի առօրյայում:

Աղյուսակ 4. Զգայական սննդակարգի կազմակերպման ձևեր

Տեսողական	Փայլող լուսատու ձողիկներ, գունավոր լամպեր, գունավորում, արևային ակնոցներ, փազլներ, զգայական շշեր, տեսողական ցուցանակներ, զգայական վրաններ, պատկերի գունավորում թվերով և այլն:
Լսողական	Երգ, երգեցողություն, երաժշտություն, երաժշտական գործիքներ, ականջակալներ, բնության ձայներ, աուդիոգրքեր, լուռ սենյակ, լսողական խաղեր, ականջների խուփեր և այլն:
Հոտառական	Հոտավետ յուղեր, հոտավետ ծեփամածիկ կամ խմոր, հոտավետ ներկեր մատիկներով նկարելու համար, արոմաթերապիա, սննդի պատրաստում, հոտավետ բարձիկներ և այլն:
Համային	Կերակրի համի, ջերմաստիճանի, բաղադրության փորձարկում, հեղուկները ձողիկով խմել, մաստակ կամ դոնդողային կոնֆետներ, մաստակով փուչիկ անել, վիբրացիոն ատամի խոզանակի կիրառում:
Շոշափողական	Զգայական պարկեր ընդեղենով, մատիկներով նկարելու գործողություն, մաշկի մերսում, խաղ ավազով, խաղ փրփուրով, խաղ ջրով, զգայական զբոսանք, լող, ծեփամածիկ կամ խմոր և այլն:
Անդաստակային/ հավասարակշռության	Ճոճանակ, սահարան, թռիչքներ թերապևտիկ գնդակի վրա, յոգա, հեծանիվ, ցատկեր մեկ ոտքից մյուսի վրա և այլն:

Շարժողական/ պրոպրիոցեպտիվ	Ծանր առարկաների հրում, տեղափոխում, պատի հրում, ծանրացված ծածկոցներ, խաղեր խաղահրապարակում և այլն:
Հանգստացնող գործողություններ	Ծանրացված ծածկոցներ, մեղմ, լիցքաթափող երաժշտություն, ծանր մկանային աշխատանք, ուժեղ սեղմող մերսում, ճոճ, մաստակ ծամել կամ երկար ծամվող ուտելիք կիրառել, կքանհստեր թռիչքով և առանց դրա, մեղմ տատանողական շարժումներ, տնային կենցաղավարության գործողություններ, հանգստացնող արոմաթերապիա, ձեռքի մերսում, աթոռ-ճոճանակ, յոգա և այլն:
Ակտիվացնող գործողություններ	Օճառի պղպջակներ ակտիվ երաժշտության ներքո, խառը և աղմկոտ խաղեր, զգայական խաղալիքներ, սառը ըմպելիքներ կամ սառույցով խաղեր, գնդակով խաղեր, շոշափելիքի արկղ, սառը, կծու, խրթխրթան սնունդ, ծեփամածիկ կամ խմոր, վառ լույսեր, բատուտ, արագ շարժումներ, վազք, ցատկ, լող և այլն:

Աղյուսակ 5. Զգայական սննդակարգի աշխատանքային թերթիկի օրինակ

ԶԳԱՅԱԿԱՆ ՍՆՆԴԱԿԱՐԳ			
Ամիս-ամսաթիվ			
Երեխայի անուն, ազգանուն			
Աջակցող մասնագետ			
Օրվա հանձնարարություն/ գործողություն	Վարքագիծ	Զգայական հանձնարարություն/ գործողություն	Արդյունք
Արթնանալ	Դժվար է արթնանում/ դյուրագրգիռ է	Միացրեք լույսը և մեղմ մերսեք մեջքը, մինչև արթնանա:	Ավելի հանգիստ է արթնանում, երեխան պակաս դյուրագրգիռ է:
Նախաճաշել	Դժվարանում է հանգիստ նստել և ուտել սեղանի մոտ:	Առաջարկեք խրթխրթան ուտելիք և սնուզի ձողիկով. ցանկալի է, որ երեխան նստի ճոճվող աթոռի վրա:	Մոտ տասը րոպե կարողացել է նստել սեղանի շուրջը, այնուհետև գրգռվել է և հեռացել սեղանի մոտից:
Հագնվել	Չի սիրում հագնվել դպրոց գնալուց առաջ:	Սեղմող հագուստ հիմնական հագուստի տակից:	Օգնել է հանգիստ հագնվելուն:
Ատամները լվանալ	Չի սիրում ատամները լվանալ:	Վիբրացիոն ատամի խոզանակի կիրառում:	Երկու րոպե լվացել է ատամները՝ հաճույք ստանալով թրթռումից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պապիկյան Վ. Ա. Էրգոթերապևտիկ միջամտության գործնական խորհուրդներ, Հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացումը խթանելու համապարփակ մոտեցումները Էրգոթերապիա մասնագիտության շրջանակներում: Նյու-Յորք-Երևան (2021):
2. Джин, А. Э. (2009). Ребенок и сенсорная интеграция. Понимание скрытых проблем развития. пер. с англ. Юлии Даре / Э. Джин Айрес. - М.: Теревинф.
3. Кислинг, У. (2014). Сенсорная интеграция в диалоге: понять ребенка, распознать проблему, помочь обрести равновесие / Улла Кислинг [пер. с нем. К.А. Шарп]. Москва: Теревинф, 240 с.
4. Ayres, A. Jean, & Robbins, J. (2005). Sensory integration and the child: Understanding hidden sensory challenges. Western Psychological Services.
5. Ben-Sasson, A., Carter, A.S, Briggs-Gowan, M.J. (2009). Sensory over-responsivity in elementary school: prevalence and social-emotional correlates. J Abnorm Child Psychol. Jul;37(5):705-16.
6. Danielson, M.L., Bitsko, R.H., Ghandour, R.M., Holbrook, J.R., Kogan, M.D., Blumberg, S.J. (2018). Prevalence of Parent-Reported ADHD Diagnosis and Associated Treatment among U.S. Children and Adolescents, Journal of Clinical Child and Adolescent Psychology.
7. Dinosaur Physical Therapy (DPT) (2023). Pingback: Sensory Integration for all! <https://blog.dinopt.com/sensory-integration-treatment-ideas/>
8. Friel, P.N. (2007). EEG biofeedback in the treatment of attention deficit hyperactivity disorder, Alternative medicine review: a journal of clinical therapeutic, Vol. 12 (2), p. 146-151.

9. Green, D., Chandler, S., Charman, T., Simonoff, E., Baird, G. (2016). Brief Report: DSM-5 Sensory behaviours in children with and without an Autism Spectrum Disorder. *J Autism Dev Disord.* 2016 Nov;46(11), p. 3597-3606.
10. Guardado, K.E. & Sergent, Sh.R. (2022). Sensory Integration. Creative Commons Attribution-NonCommercial-NoDerivatives 4.0 International (CC BY-NC-ND 4.0).
11. Lane, S.J., Mailloux, Z., Schoen, S., Bundy, A., May-Benson, T.A., Parham, L.D., Smith Roley, S., Schaaf, R.C. (2019). Neural Foundations of Ayres Sensory Integration. *Brain Sci.* 2019 Jun 28;9 (7).
12. Pastor-Cerezuela, G., Fernández-Andrés, M., Sanz-Cervera, P., Marín-Suelves, D. (2020). The impact of sensory processing on executive and cognitive functions in children with autism spectrum disorder in the school context, *Research in Developmental Disabilities*, Volume 96.
13. Sensory Processing Disorder (SPD), (2023). <https://www.sensory-processing-disorder.com/sensory-integration-activities.html>

Հարությունյան Մարիաննա Ռուբենի

ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ մանկավարժների համար